ՀՏԴ 929:902/904(479.25) Մելքոնյան + 726.5(479.25)

Doi:10.54503/0135-0536-2024.3-245

ՀՈՒՍԻԿ ՄԵԼՔՈՆՅԱՆ. Ցաղաց քար վանքը *(պատմահնագիտական ուսումնասիրություն), խմբ.՝ Գ. Սարգսյան, Երևան, ՀԱԻ հրատ., 2024, 184 էջ*:*

Բանալի բառեր՝ Ցաղաց քար վանք, հուշարձանախումբ, եկեղեցի, խորան, կոթող, վիմագիր, խաչքար, նվիրատվություն:

Միջնադարյան Հայաստանի պատմության ուսումնասիրման համար աղբյուրագիտական առատ նյութ են ընձեռում վանական համալիրները, որոնց կազմում ընդգրկված կառույցների որմերին և կոթողային հուշարձաններին պահպանված վիմագրերը, ինչպես նաև այդ նույն համալիրներից հայտնի ձեռագիր մատյանների հիշատակարաններն անփոխարինելի սկզբնաղբյուրներ են: Հայագիտության մեջ՝ դեռևս XIX դարում լայն տարածում գտած տեղագրական-նկարագրական բնույթի աշխատություններում, արդեն իսկ կարևորվել է տարբեր գավառների, վանքերի, ամրոցների և պատմամշակութային այլ կենտրոնների գրավոր ժառանգությունն առանձին մենագրության նյութ դարձնելը[1]: Ավելի ուշ նմանօրինակ աշխատություններին նոր որակ հաղորդեց նաև հնագիտական պեղումների արդյունքներով նյութի համալրումը, երբ տվյալ հուշարձանի վերաբերյալ առկա գրավոր տեղեկությունները լրացվում էին նաև հետազոտողի կողմից վավերացված հնագիտական՝ պեղածո նյութերով: Իբրև այդպիսին, հիշարժան են հատկապես Անիի և Դվինի հնագիտական պեղումների արդյունքներն ամփոփող կոթողային աշխատությունները[2], որոնց հետևեցին նաև առանձին կենտրոնների պատմամշակութային ժառանգությունն ամբողջացնող մենագրություններ, ինչպիսիք են Ամբերդի, Թանահատ-



---

* *Ներկայացվել է 06. XI. 2024 թ., ընդունվել է տպագրության 21. XI. 2024 թ.:*

[1] *Այդպիսիք տե՛ս Մ. Բ ժ շ կ ե ա ն ց. Ճանապարհորդութիւն ի Լեհաստան եւ յայլ կողմանս բնակեալս ի Հայկազանց սերելոց ի նախնեաց Անի քաղաքին, Վենետիկ, 1830, Յ. ե պ ս. Շ ա հ խ ա թ ո ւ ն ե ա ն ց. Ստորագրութիւն Կաթուղիկէ Էջմիածնի եւ հինգ գաւառացն Արարատայ, բաժանեալ յերկուս հատորս, Սբ Էջմիածին, 1842 (վերահրատ.՝ 2014 թ.), Ս. ա ր ք. Ջ ա լ ա լ ե ա ն ց. Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Ա-Բ, Տփխիս, 1842, 1858 (արևելահայերեն փոխադրությունը՝ 2016 թ.), Մ. ա ր ք. Ս մ բ ա տ ե ա ն ց. Տեղագիր Գեղարքունի ծովազարդ գաւառի, որ այժմ Նոր-Բայազիտ գաւառ, Վաղարշապատ, 1895 և այլն:*

[2] Н. М а р р. Ани: книжная история города и раскопки на месте городища, Л.-М., 1934 (*վերահրատ.՝* Ереван, 2011*), Կ. Ղ ա ֆ ա դ ա ր յ ա ն. Դվին քաղաքը և նրա պեղումները, հ. 1–2, Երևան, 1952, 1982:*

Գլաձորի, Վահանավանքի, Լոռի բերդի և այլ համալիրներին նվիրված պատմահնագիտական ուսումնասիրությունները[3]*:*

Վերջերս նմանօրինակ աշխատությունների շարքը համալրվեց ևս մեկով. ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ հրատարակվեց նույն ինստիտուտի միջնադարյան հնագիտության բաժնի ավագ գիտաշխատող, հնագետ, պ. գ. թ. Հուսիկ Մելքոնյանի երկարամյա աշխատանքի արդյունքը՝ Ցաղաց քար վանքին նվիրված մենագրությունը, խմբագրությամբ՝ վիմագրագետ, պ. գ. թ. Գագիկ Գ. Սարգսյանի: Վանական այս համալիրը գտնվում է ՀՀ Վայոց ձորի մարզի Արտաբույնք գյուղից շուրջ 6 կմ հյուսիս-արևելք, բաղկացած է երկու մեծ հուշարձանախմբից, որոնց կազմում վեց մեծ ու փոքր եկեղեցի և այլ կառույցներ են ընդգրկված: Նորահրատ աշխատությունն ամփոփում է վանքի պատմաճարտարապետական, քանդակագործական արվեստի ընդհանուր նկարագիրը, հեղինակի ղեկավարությամբ՝ 1987–1993 թթ. իրականացված հնագիտական պեղումների արդյունքները, նյութական մշակույթի գտածոները, վանքի տնտեսությունն ու կալվածքները, ինչպես նաև պատմագիտության համար բացառիկ սկզբնաղբյուր համարվող վիմագրական ժառանգությունը (114 միավոր, որ 115 է ներկայացվել[4]*): Առաջաբանի փոխարեն «Երկու խոսք» վերտառությամբ հեղինակի մուտք-նախաբանին հետևում են վերոհիշյալ դրույթներն արտացոլող միավորները՝ խորագրված. «Ցաղաց քար վանքի պատմությունը» (էջ 8–10), «Ցաղաց քար վանքի անվան ստուգաբանությունը» (էջ 10–11), «Վանքի ուսումնասիրության պատմությունը» (էջ 11–12), «Ճարտարապետական կառույցները» (էջ 12–14), «1987–1989 թթ. պեղումներով բացված հուշարձանները» (էջ 14-17), «Ճարտարապետական հուշարձանների քանդակները» (էջ 17–21), Վիմական արձանագրությունները (էջ 22–57), «Հուշակոթողները՝ խաչքարերն ու տապանաքարերը (էջ 57–60), «Ցաղաց քար վանքի նյութական մշակույթը» (էջ 60–63), «Ցաղաց քար վանքի տնտեսությունը և սեփական կալվածքները» (էջ 63–67): Շարադրանքն ամբողջացվում է սկզբնաղբյուրներում վկայված Ցաղաց քարի վանահայրերի ժամանակագրական ցանկով (957–1555 թթ.) (էջ 67) և վերջաբանով (էջ 67–68): Նշելի են նաև գիտական ուսումնասիրություններին հարիր նյութի ընդարձակ օտարալեզու՝ ռուսերեն ու անգլերեն ամփոփումների առկայությունը (էջ 69–100), չափագրությունները և գրչանկար-լուսանկարները (էջ 102–175), օգտագործված գրականության, աղյուսակների ու անվանական ցանկերը (էջ 176–183), որոնցով աշխատությունն առավել հասանելի է դառնում ընթերցող լայն հանրությանը:*

Ակնհայտ է, որ մենագրության հեղինակին լիովին հաջողվել է միջնադարյան Հայաստանի հոգևոր-մշակութային հայտնի կենտրոն Ցաղաց քար վանքը ներկայացնել տարբեր դիտանկյուններից՝ մեկտեղելով վանքի ոչ միայն գրավոր ժառանգությունը, այլև հնագիտական, ճարտարապետական, արվեստաբանական և այլ գիտակարգերի հետ առնչվող նյութերը, որոնցով աշխատութ-

---

[3] *Ս. Հարությունյան. Անբերդ, Երևան, 1978, Ի. Ղարիբյան. Գլաձոր. տեղագրությունը, պեղումները, վիմագիր արձանագրությունները, Երևան, 1983, Գ. Գրիգորյան. Վահանավանք. պատմահնագիտական ուսումնասիրություն, Երևան, 2007, Ի. Ղարիբյան. Լեռե բերդաքաղաքը և նրա պեղումները, Երևան, 2009:*

[4] *Վիմագրերի համարակալման ճշգրիտ հաջորդականությունը երբեմն խառնվել է, մասնավորապես՝ շարքից դուրս են մնացել 71 և 91 թվահամարները, իսկ 114-ը երկիցս է համարակալվել:*

յան ուսումնասիրության շրջանակն էապես ընդլայնվել է: Թեև շարադրանքն աչքի է ընկնում քննական վերլուծություններով և տարբեր հարցերի շուրջ հեղինակի խստահայաց մոտեցմամբ, սակայն որոշ դեպքերում, հատկապես՝ վիմագրերը վերծանելիս, կարելի էր ծավալվել ավելին:

Այսպես, համալիրի արևելյան հուշարձանախմբի Սբ Կարապետ գմբեթավոր եկեղեցու մուտքի բարավորի՝ Հայր Վարդիկի անունից կազմված քառատող արձանագրությունն ինքնատիպ է մի քանի առումով: Միջնադարյան գրավոր աղբյուրներում, քրիստոնեական գաղափարախոսությամբ պայմանավորված, խիստ տարածված էր ինքնանվաստացնող արտահայտչամիջոցներով սեփական անձը ներկայացնելը, ինչպես, օրինակ, սուտանուն, անարժան, փծուն, նվաստ, հոգնամեղ, երբեմն նույնիսկ՝ տխմար, ապիկար և այլն: Ցաղաց քարի վիմագրերից մեկում Հայր Վարդիկը Տիրոջից ողորմություն է հայցում Երկրորդ գալստյան ժամանակ՝ իրեն բնութագրելով՝ «որպես աւազակին ի խաչին եւ մաքսաւորին ի տաճարին» (էջ 24–25, արձ. 2), այսինքն՝ խաչի մոտ՝ ավազակ, տաճարում՝ մաքսավոր[5], ինչն ինքնին յուրօրինակ է համանման հիշատակությունների շարքում: Միևնույն վիմագրում Հայր Վարդիկն իբրև ստացող է հիշվում, որը «ստացել» է Սբ Կարապետ եկեղեցին: Հայտնի իրողություն է՝ ձեռագիր մատյանների պատվիրատուները հիշատակարաններում հիմնականում իբրև ստացող են վկայվում[6], բայց այն, որ եկեղեցու կառուցումը նախաձեռնած անձը կամ պատվիրատուն շինարարական վիմագրում ևս կարող էր ուղղակիորեն ստացող կոչվել, ուշադրության արժանի է: Ավելին, պատարագաժամերի սահմանմանը նվիրված վիմագրի երկրորդ մասում Հայր Վարդիկի հիշատակին Սբ Սարգսի տոնին պատարագ պիտի մատուցվի հինգ եկեղեցիներում, այլապես կարգը խափանողները պիտի նզովքի արժանանան. «Արդ, որ Սբ Սարգիսն աւր յայս Ե. (5) եկեղեցումս ժամ Վարդկա չառնէ, Սբ Կարապետես եղիցի նզովեալ…» (էջ 25, արձ. 2): Հինգ եկեղեցի պետք չէ փնտրել Ցաղաց քարում. դրանք ոչ այլ ինչ են, եթե ոչ միևնույն Սբ Կարապետ եկեղեցու հինգ խորանները՝ ավագ խորանն ու եկեղեցու չորս անկյունների ավանդասենյակների փոքր խորանները, որոնք հստակ նկատելի են անգամ եկեղեցու հատակագծում (էջ 105, աղ. 4): Խորաններն առանձին եկեղեցի կոչելու երևույթը խիստ տարածված էր միջնադարյան Հայաստանում և իր արտացոլումն է գտել նաև վիմագրերում, որպիսիք վկայված են նաև Անիում, Հաղբատում, Տաթևում, Հովհաննավանքում և այլուր: Օրինակ՝ Հովհաննավանքի Կաթողիկե եկեղեցու հյուսիսային ավանդատան մուտքի վերնամասի 1216 թ. վիմագրում այն վկայված է դարձյալ նզովքի բանաձևում, ըստ որի՝ նվիրատվությունը խափանողները թող. «զԹ. (9) եկեղեցիս դատին յԱստուծոյ եւ ամենայն սրբոց»[7], այսինքն՝ թող դատապարտվեն միևնույն եկեղեցու ինը խորանների անունից, որ տվյալ դեպքում եկեղեցու ավագ խորանն ու չորս անկյունների կրկնահարկ ավանդատների փոքր խորաններն են:

Պատվիրատու-ստացողի առիթով նշելի է նաև 1984 թ. Ցաղաց քարում

---

[5] *Հնում մաքսավորները բարձր տուրքերով կեղեքել են հարկատուներին, ուստի մաքսավոր բառը՝ «համանիշ դարձաւ հարամ վաստակ անողի կամ մեղաւորի» (Հայերէն բացատրական բառարան, հ. երրորդ, կազմեց՝ Ստ. Մալխասեանց, Երեւան, 1944, էջ 286):*

[6] *Խ. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. Հայերեն ձեռագրերի հիշատակարանները, Երևան, 2019, էջ 141–158:*

[7] *Կ. Ղ ա ֆ ա դ ա ր յ ա ն. Հովհաննավանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1948, էջ 84–85, արձ. 18:*

հայտնաբերված խաչքարի վիմագիրը, որը կանգնեցնող Քրիստոսի նվաստ ծառա Թադեոսը դարձյալ հանդես է գալիս որպես ստացող խաչի, այսինքն՝ խաչքարի կերտման-կանգնեցման պատվիրատու, իսկ խաչը բնութագրվում է իբրև անմատույց աշտարակ և Աստծու արյամբ ներկված գենք. «զխաչս աշտարական մատոյց եւ զեն աստուածամուխս...» (էջ 29, արձ. 13), կամ վանքի արևմտյան հուշարձանախմբի գավթի հյուսիսային խցերից մեկի քառատող վիմագրում Խաչիկ կրոնավորը հիշվում է իբրև եկեղեցու ստացող, որի հիշատակին տարեկան մեկ պատարագաժամ է սահմանվել. «ի հալալ ըստացուածոց իւր ըստացաւ զեկեղեցիս եւ գրեցաք ի տարին Ա. (1) ժամ» (էջ 39–40, արձ. 50): Բերված օրինակներն ինքնին վկայում են, որ Ցաղաց քարի վիմագրերում ավանդաբար ստացողներ են կոչվել նաև շինարարական գործի նախաձեռնողնպաստավորողները, որոնցից մեկն էլ Խաչիկ կրոնավորն է, որի անվան հետ պիտի կապել, թերևս, վանքի արևմտյան հուշարձանախմբի Սբ Հովհաննես եկեղեցու կառուցումը:

Հաջորդ կարևոր դրվագը, որին ցանկանում ենք անդրադառնալ, գրախոսվող ուսումնասիրության հեղինակի կողմից Սբ Նշան անվանակոչված եկեղեցուն արևմուտքից կից գավթի արձանագրության հետևյալ հատվածն է. «... շինեցի զՍբ Կաթողիկէս եւ կանգնեցի զնշան Սբ Երրորդութեանն ...» (էջ 31, արձ. 19): Նախ նշենք, որ տեղի վիմագրերում եկեղեցին ուղղակիորեն Սբ Նշան անունը չի կրում: Այդանուն եկեղեցի չի հիշատակում նաև Սյունյաց պատմագիր Ստեփանոս Օրբելյանը. «Ցաղաց քար՝ բարձրահռչակ և սուրբ առաքինարան, յորում ի 490 թուականին (1041 թ. – Ա. Հ.), ի թագաւորութեանն Գագկայ, հայր ոմն վանիցն Վարդիկ անուն շինէ պայծառ եկեղեցիս երկու ի հանգստարանի առաջին սուրբ հարցն, զմին գմբէթայարկ յանուն սրբոյ Կարապետին, և միւսն սագաշէն, հրաշալի յօրինուածովք»[8]: Վանքի վիմագրերից 34-ն (19-ը՝ նորահայտ) առաջին անգամ վիմագրագիտության սկզբունքներով հրատարակած անվանի վիմագրագետ Սեդրակ Բարխուդարյանը ևս Սբ Նշան եկեղեցու անվան հարցում լռում է, թեև վիմագրերի դեպքում, թերևս վրիպմամբ, դրանք ներկայացրել է Սբ Հովհաննես եկեղեցու անվան ներքո[9]: Այդուհանդերձ, Ս. Բարխուդարյանը հստակ տարանջատում է վանքի արևելյան ու արևմտյան հուշարձանախմբերը՝ առաջինում հիշատակելով Սբ Կարապետ գմբեթավոր եկեղեցին և հյուսիսարևելյան կողմում գտնվող «կիսագետնափոր և երկհարկանի» կառույցը, որի առաջին հարկում միանավ, թաղակապ եկեղեցին է՝ կից փոքր գավթով, իսկ երկրորդ հարկում՝ գավթի վրա, փոքր մատուռ՝ արևմտյան ճակատի յուրօրինակ ճարտարապետական հորինվածքով[10]: Ըստ Հ. Մելքոնյանի՝ այս հուշարձանը երկհարկ դամբարան-եկեղեցի է, որի երկրորդ հարկի ճակատային մասում առկա է կենտրոնում խորշ ունեցող մի կառույց՝ կից զույգ գեղաքանդակ խաչքարերով, որոնք թվագրվում են XI դարի առաջին կեսով: Հնագետի հրատարակած հին լուսանկարներում հստակ է խորշի վերնամասի ճարտարապետական ինքնատիպ լուծումը, որը, ցավոք, եկեղեցին վերականգնելիս ճարտարապետները չեն պահ-

---

[8] *Ստեփանոս Օրբէլեան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 340:*

[9] *Դիվան հայ վիմագրության, պր. III, Վայոց ձոր. Եղեգնաձորի և Ազիզբեկովի շրջաններ, կազմեց՝ Ս. Բարխուդարյան, Երևան, 1967, էջ 151–154, արձ. 455–460:*

[10] *Նույն տեղում, էջ 141:*

պանել և այն ամբողջացրել են երկթեք ճակտոնի տեսքով (էջ 125, աղ. 24): Իրականում հորինվածքի վերնամասը կամարակապ է, որի երկու կողմում՝ արտաքուստ պահպանվել են քանդակազարդ զույգ խարսխաձև հիմքեր, իսկ ներքուստ՝ կամարի տակ, իրար են հպվում ևս երկու փոքր կամարներ: Հորինվածքի վերին կենտրոնական հատվածում, թերևս, կոթողի համար նախատեսված պատվանդան է բարձրանում և այնպիսի տպավորություն է, որ այստեղ երեք կոթող է կանգնեցվել՝ մեկն ավելի բարձր՝ կենտրոնում, երկուսը՝ կամարի աջ և ձախ կողմում (միգուցե հենց այստեղից էլ բխում է վիմագրում վկայված Սբ Երրորդություն անունը): Հնագիտական պեղումներով այստեղ փաստագրվել են նաև կոթողների սյուների, խոյակների, ինչպես նաև թեավոր խաչի քանդակազարդ բեկորներ (էջ 138, աղ. 37):

Ահա այս երկհարկ թվացող եկեղեցին է, որ մենագրության հեղինակը Սբ Նշան է կոչում: Կարծում ենք՝ Հ. Մելքոնյանն այդ տեսակետին է հանգել՝ հիմք ընդունելով խնդրո առարկա վիմագրում Հայր Վարդիկի կողմից Սբ Երրորդությանը նվիրված նշանի՝ կոթողի կանգնեցման վերաբերյալ վկայությունը, մինչդեռ բուն եկեղեցու համար նշվում է Կաթողիկե (բնագրում՝ Կաթաղիկե) անունը, որին միայն հաջորդում է Սբ Երրորդություն կոչված նշանի՝ խաչի, կոթողի կանգնեցումը: Այն, որ կանգնեցված սուրբ նշանը կառույցի արևմտյան ճակատը հարդարող կոթողին է վերաբերում, հաստատվում է զուգահեռ այլ փաստերով ևս. Ստեփանոս Օրբելյանի հաղորդմամբ՝ ի Նշանավորումն Տաթևի վանքի գլխավոր՝ Սբ Առաքելոց (հայտնի նաև՝ Սբ Պողոս-Պետրոս) եկեղեցու կառուցման, տաճարի հարավային մուտքի դիմաց կանգնեցվել է Սբ Երրորդությանը նվիրված ճոճվող գավազան-սյունը. «... կանգնէ և մերձ եկեղեցւոյն հանդէպ դրանն հարաւոյ սիւն մի զարմանալի յանուն սրբոյ Երրորդութեանն ի մանր քարանց պատուածեալ ի չափ 30 կանգնոյ»[11]: Պատմագրի հաղորդումը վավերացվում է նաև Սբ Առաքելոց եկեղեցու արևմտյան պատին պահպանված վիմագրերից մեկով, որը տաճարի 895 թվակիր շինարարական արձանագրության ուղղակի լրացումը կարելի է համարել, ըստ որի՝ այդ նույն տարում (895 թ.), վանքի միաբանության աջակցությամբ. «կանկնեցաւ արձանս»[12]: Այսինքն՝ վիմագիրն այս դեպքում վկայում է ոչ թե եկեղեցու շինարարության, այլ կանգնեցված արձանի՝ կոթողի մասին, որն ըստ Օրբելյանի՝ Սբ Երրորդություն է կոչվել:

Վկայված երևույթը, ինչպես տեսանք, վավերացվում է նաև Ցաղաց քար վանքի հնագիտական պեղումների արդյունքներով, երկհարկ դամբարան-եկեղեցու արևմտյան ճակատի ճարտարապետական լուծմամբ և, իհարկե, պահպանված վիմագրով: Հ. Մելքոնյանն անդրադարձել է խնդրո առարկա վիմագրից վեր, հորինվածքային առումով խիստ բացառիկ վերոհիշյալ հարդարանքին, որտեղ, ըստ էության, կանգնեցվել է ենթադրյալ կոթողը, որն էլ վիմագրում կարող էր ուղղակիորեն սուրբ նշան կոչվել: Կանգնեցված կոթողը տրամաբանորեն պիտի պսակված լիներ թեավոր խաչով, որպիսիք հայտնի են դեռևս վաղ միջնադարից և որոնց կանգնեցման ավանդույթի վերականգնման փորձերից պիտի համարել ոչ միայն Տաթևի և Որոտնավանքի, այլև Ցաղաց քարի ենթադրյալ կոթողը, որի լավագույն նախօրինակը Սյունյաց եպիսկոպոսանիստ կենտրոն Տաթևի ճոճվող գավազան-սյունն է:

[11] *Ստեփանոս Օրբէլեան. էջ 225:*

[12] A. Harutyunyan. The Spiritual Citadel of Syunik: Tatev. Yerevan, 2024, *էջ 21, արձ. 2:*

Ցաղաց քար վանքն աչքի է ընկնում նաև իրենց տեսակում եզակի խաչքարերով, ուղղահայաց դիրքով կանգնեցված գերեզմանական հուշակոթողներով, քանդակագործական արվեստով, ի մասնավորի՝ Սբ Կարապետ եկեղեցու բեմառաջքի սափորների քանդակաշարով, շքամուտքի այգային հորինվածքներով, ճակտոնների կենդանակերպ բարձրաքանդակներով և այլն: Այստեղ պահպանվել են ինչպես կենդանամարտի ու ճանկող արծվի հայտնի հորինվածքները, այնպես էլ եկեղեցու մանրակերտը ձեռքերին պարզած կտիտորական պատկերաքանդակ, որը թեև մասնակի վնասված է, սակայն Հ. Մելքոնյանի բնորոշմամբ՝ պատկերում է նաև արևելյան հուշարձանախմբի կառուցումը նախաձեռնած Հայր Վարդիկին, ըստ այդմ թվագրելի է XI դարի առաջին կեսով:

Զմոռանանք նկատել մի կարևոր հանգամանք ևս. հեղինակը վանքի տնտեսությունն ու կալվածքները ներկայացնում է բացառապես վիմագրերի հիմամբ, ինչն առիթ է դարձել մանրամասն անդրադառնալու նաև տեղի նվիրատվական վիմագրերի բովանդակությանը: Արդյունքում պարզվել են վանքին անդամագրված նվիրատուների անունները, նրանց կողմից արված բազմաթիվ նվիրատվությունների տեսականին (գյուղ, այգի, արտ, մարգ, մասունք, դրակալ, ձեռաց խաչ, եկեղեցական սպասք և այլն) ու դրանց դիմաց մատուցվող պատարագների քանակական պատկերը:

Մնում է վերահաստատել այն անժխտելի իրողությունը, որ միջնադարյան Հայաստանի վանական համալիրներում, այդ թվում նաև՝ Ցաղաց քար վանքում, ավանդաբար շարունակվել են հիշման արժանի լինելու ակնկալիքով պայմանավորված շինարարական և բարենորոգչական աշխատանքները: Դրանք իրականություն են դարձել մեկենասների, այցելու-նվիրատուների, շնորհաշատ վարպետների ու մեր հոգևոր հայրերի անմնացորդ նվիրումի արդյունքում: Նմանօրինակ նվիրումի մերօրյա դրսևորումներից մեկն էլ հնագետ Հուսիկ Մելքոնյանի արժեքավոր աշխատությունն է, որը վավերագրումն է վանքի պատմության, հետազոտողի կատարած հնագիտական պեղումների ու վիմագրերի վերծանությունների, որի առիթով տեղին է վկայաբերել Հայր Վարդիկի անվանակիր վիմագրերից մեկում զետեղված հայտնի ասույթը. «Ուր բանքն սպառին եւ գործքն թագաւորեն» (էջ 31, արձ. 19):

ԱՐՍԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի վիմագրության բաժնի վարիչ, պ. գ. թ., Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի գրչության կենտրոնների ուսումնասիրման բաժնի ավագ գիտաշխատող, ԵՊՀ, Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի և Գևորգյան հոգևոր ճեմարանի դասախոս: Գիտական հետաքրքրությունները՝ հայ վիմագրություն, ձեռագրագիտություն, միջնադարյան մշակութային ժառանգություն: Հեղինակ է 11 գրքի և շուրջ 100 հոդվածի:
ORCID:0000-0002-4890-5584. ars.vimagraget@gmail.com